ԱԴԱՆԱՅԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԲՐՈՆԶԵ ԳՈՏԻՆԵՐԸ

(Արևմտյան Հայաստանի ուրարտական հուշարձանները շարից)

Պատմ. գիտ. դոկտոր Ս. Ա. ԵՍԱՅԱՆ

Ինչպես հայտնի է, Արևմտյան Հայաստանի տարածքում թալանչիական պեղումների հետևանքով՝ Արևմտյան Եվրոպայի «հնաոճ շուկան» վերջին տասնամյակներում լցվեց տարբեր ժամանակներին վերաբերող դեղարվեստական մետաղով, որոնց մեջ հատուկ տեղ են գրավում ուրարտական նյութերը։ Այդ առարկաները հիմնականում ընկան Արևմտյան Եվրոպայի և մասամբ Ամերիկայի և Հապոնիայի պետական և մասնավոր թանգարանները։ Այս բարձրարվեստ մետաղյա առարկաների թվին են պատկանում նաև Ադանայի դավառագիտական թանգարանում պահվող ուրարտական բրոնզե գոտիները, որոնք առանց գիտական մեկնաբանության և համեմատական նյութերի կատալոգային ձևով հրատարակել է Օ. Ա. Տաշյուրեկը[1]։

Ուրարտական գոտիները իրենց զարդամոտիվներով բաժանվում են հինգ խմբի, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին ստորաբաժանվում է տարբեր ենթախմբերի. 1. երկրաչափական նախշերով գոտիներ, 2. բջիջաձև, 3. ողմատորսորդական և 4. պաշտամունքային մոտիվներով գոտիներ, 5. խառը նախշերով գոտիներ։

Ադանայի թանգարանի գոտիները մենք քննարկում ենք նշված դասակարգումով։ Առաջին խումբն են կազմում երկրաչափական նախշերով գոտիները, որոնց թվին է պատկանում Ադանայի թանգարանի բրոնզե գոտու բեկորը։ Նրա պահպանված երկարությունը՝ 22 սմ, իսկ լայնությունը 9,8 սմ է[2]։ *Գոտու եզրերը զարդարված են երկու ուղղահայաց գծերով, իսկ ամբողջ մակերեսը զարդարված է «վազող պարույրներից» ութ շարքով, որոնց ծայրերը միացված են ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայաց գծերով։*

Ադանայի թանգարանի ուրարտական գոտիների 2-րդ խումբն են կազմում բջիջաձև գոտիները, որոնք ներկայացված են մեկ ամբողջական և երկու բեկորային նմուշներով։

Ամբողջական օրինակը (երկ. 1 մ[3]*) այս տիպի գոտիների մի հիասքանչ նմուշ է։ Գոտու եզրերը զարդարված են իրար հաջորդող շեղանկյուններով և շրջանակներով։ Եզրագոտու մեջ առնված գլխավոր մասը պատված է 13 օվալաձև բջիջներով։ Առաջին ութ բջիջներում շարժումը կատարվում է աջից ձախ, իսկ մյուսներում՝ ձախից աջ։ Առաջին և երրորդ բջիջներում պատկերված են վազող առյուծներ, հինգում և յոթում՝ այծեր, 9-րդում՝ ձկան գլխով առյուծ, 11-րդում՝ ձկան գլխով թևավոր մարդ, 13-րդում՝ առյուծ։ 2, 4, 8, 10, 12-րդ բջիջներում տեղադրված են տարբեր ձևի վարդյակներ։ Բջիջների միջև ընկած տարածքը վերևից և ներքևից կազմում են 12 կիսաշրջանակներ, ուր նույնպես տեղադրված են տարբեր պատկերներ՝ այսպես 1, 3, 5, 7, 9,*

---

[1] O. A. Taşyürek. The Urartian belts in the Adana Regional Museum. Ankara, 1975.

[2] Նույն տեղում, նկ. 28։

[3] Նույն տեղում, նկ. 3։

11-րդ կիսաշրջանակները զարդարված են նման վարդյակներով։ 2-րդում տեղադրված է առյուծ, 4-րդում և 6-րդում՝ այծեր, 8-րդում՝ ձկան պոչով առյուծ, 10-րդում ձկան պոչով թևավոր մարդ և 12-րդում՝ վագրի առյուծ։ Դոտու աջ ծայրում ուղղանկյուն շրջանակի մեջ պատկերված է Կենաց ծառ և ամրացված է փոքրիկ օղակ՝ դոտին կոճկելու համար։

Դոտիների այս խմբի բեկորներից մեկը ունի 22 սմ երկարություն[4]։ Նրա մակերեսը զարդարված է երեք բջիջներով և նրանցից անջատվող կիսաշրջանակներով։ Նրանք բոլորը, բացի ծայր աջ կիսաշրջանակներից, ուր պատկերված են այծեր, զարդարված են վարդյակներով, շեղանկյուններով և «արմավենազարդով»։ 3-րդ դոտու բեկորը ունի 7 սմ երկարություն[5]։ Այստեղ պահպանվել է մի դրիֆոնի պատկեր, որը ներկայացնում է դիշատիչ թռչունի գլխով և կարիճի պոչով թևավոր առյուծ։

Դոտիների 3-րդ մեծ խումբը կազմում են ռազմաորսորդական սյուժեներով դոտիները, որոնք ներկայացված են 9 օրինակով։ Դրանցից առաջինը, որը պահպանված է երկու խոշոր բեկորներով[6], երիզված է պարանահյուս կոտեզարդով։ Առաջին բեկորի մարդկանց և կենդանիների պատկերները շարժվում են ձախից աջ, իսկ երկրորդի վրա՝ աջից ձախ։ Այս պատկերները մեկը մյուսից բաժանվում են իրար հաջորդող խաչերով, շեղանկյուններով, արմավենազարդով և Կենաց ծառերով։ Ձախից առաջին վանդակում վերից վար՝ մեկ գծով պատկերված են երեք ցուլեր։ Նրանք ունեն կարճ, կեռ եղջյուրներ, ընդգծված մռութներ և բաշ։ Սրանց հաջորդում է կենտրոնական խաչի տեսքով ուղղահայաց բաժանարար շերտը, որից վեր և վար պատկերված են 7 և 8 թևանի, ծայրերը շրջանակներով զարդարված աստղեր։ Երկրորդ վանդակում պատկերված են 3 առյուծներ նույնպես գլխի և մարմնի ընդգծված մանրամասներով։ Հետաքրքիր է, որ ցուլերի և առյուծների մեջքերին կան ծածկոցներ։ Պատկերների այս խումբը երրորդ վանդակից բաժանված է ուղղահայաց տեղադրված ոսմբերով։ 3-րդ տեսարանը ներկայացնում է կենտրոնում տեղադրված Կենաց ծառ, որի վերևում և ներքևում պատկերված են կարիճի պոչով ցուլեր։ 4-րդ վանդակում կրկնվում է առաջինի տեսարանը։ Այստեղ նույնպես պատկերված են վագրի ցուլեր։ 5-րդ տեսարանը ցուլերի գլխով և կարիճների պոչով թևավոր երկու առյուծներ են։ Յուրաքանչյուր կենդանու վրա կանգնած է մի հեծյալ մարդ, որոնց ձախ ոտքերը հենված են առյուծների գլխներին, իսկ աջերը՝ մեջքին։ Մարդիկ պատկերված են կարճ բաճկոններով և երկար թեկնոցներով, որոնց ծայրերը զարդարված են ծոպերով։ Նրանք ձախ ձեռքերին կրում են փոքր կլոր վահաններ, իսկ աջում՝ կարճ նիզակներ։ 6-րդ հատվածի վերևում և ներքևում պատկերված են առյուծներ, իսկ կենտրոնում՝ Կենաց ծառ։ 7-րդ շարքում պատկերված են 3 ցուլեր, 8-ում՝ երկու Կենաց ծառ, որոնց միջև պատկերված է վագրի առյուծ, իսկ 9-րդում՝ 3 ցուլ։ Հետաքրքիր է 10-րդ շարքի պատկերը։ Այստեղ, ինչպես և 5-բդում, պատկերված են կարիճի պոչով երկու թևավոր առյուծ, որոնք, սակայն, ունեն ոչ թե ցուլերի, այլ գիշատիչ թռչունների գլուխներ։ Նրանց վրա նույն դիրքով կանգնած են ոչ թե վահանակիրներ, այլ ձգված աղեղները ձեռքներին նետաձիգներ։

Երկրորդ բեկորի վրա կրկնվում է դրեթե նույն կոմպոզիցիան։ Առաջին ձախ շարքում մեկը մյուսից վեր պատկերված են 3 առյուծներ, իսկ երկրորդում՝ թևավոր ձիերի վրա կանգնած նետաձիգներ, 3-րդ հատվածում՝ 3 ցուլեր, 4-րդում՝ երեք առյուծներ, 5-րդում՝ կենտրոնում կարիճի պոչով ցուլ, իսկ վերևում և ներքևում Կենաց ծառեր։ Բեկորի ծայր ձախ հատվածում շրջանակի մեջ պատկերված են իրար վրա 2 ցուլ և երկու առյուծ։

---

4 Նույն տեղում, նկ. 25։

5 Նույն տեղում, նկ. 26։

6 Նույն տեղում, նկ. 1։

Փոքր-ինչ ավելի բարդ, բայց նման կոմպոզիցիա ունի այս խմբի երկրորդ դոտին[7]։ Այն երեք հորիզոնական գծերով բաժանվում է 4 հատվածների։ Առաջին, ծայր ձախ մասում տեղ են գեմ-դիմաց կանգնած ձկան պոչերով 4 թռչուններ։ Նրանցից երկուսն ունեն դիշատիչ թռչունների, իսկ մյուսները կանայի դյուխներ։ 2-րդ շարքում պատկերված է ավելի բարդ տեսարան։ Նրա ձախ մասում մեկը մյուսից վեր են 4 վազող ցուլեր, որոնց ետևից դնում են չորս առյուծներ, և ապա նորից 4 ցուլ։ Սակայն այստեղ առյուծները ոչ թե հետապնդում են առջևից դնացող ցուլերին, այլ շրջվելով հարձակվում են իրենց հետևից եկող ցուլերի վրա։ Կոմպոզիցիան ավարտվում է 4 մարտակառքերի պատկերով, որոնք հետապնդում են նշված կենդանիներին։ Մարտակառքերի թափքերին կանգնած են կառապանները և նետաձիգները։ Վերջիններս նետն արձակում են կառքերի ընթացքին հակառակ ուղղությամբ։ Երկրորդ բեկորն ավելի լավ է պահպանված։ Այստեղ, ձախ հատվածում պատկերված են 4 առյուծներ, որոնք հարձակվում են դեպի իրենց վազող ցուլերի վրա։ Այս պատկերը կրկնվում է երկու անգամ, որից հետո նորից պատկերված են 4 ցուլեր։ Չնայած այստեղ չկան որսորդների պատկերներ, սակայն առյուծներից մեկի վզին ցցված նետասլաքը վկայում է, որ պատկերված է որսի տեսարան։ Երկրորդ բեկորի 2-րդ շարքում աջից ձախ վազող 4 առյուծներ են։ Դիշատիչների առջևից շարժվում են 4 հեծյալներ, որոնք թեքվել և նետահարում են նրանց։ Հեծյալների առջևից վազում են 4 ցուլեր։ Հեծյալները կրում են սրածայր սաղավարտներ և ձեռներին ունեն ձգված տղեղներ։ Ձիերի դյուխները զարդարված են հովհարաձև ելուստներով։ Ավելի հարուստ է զարդարված 3-րդ շարքը։ Այստեղ պատկերված են 4 վազող առյուծներ, որոնց հետապնդում են մարտակառքի թափքերում կանգնած կառամարտիկները և նետաձիգները։ Այս շարքի մյուս պատկերները հիմնականում կրկնում են առաջին բեկորի երկրորդ շարքի տեսարանը՝ մարտակարգերի առջևից վազում են 4 ցուլեր, որոնց վրա դիմացից հարձակվում են վազող 4 առյուծներ։ Կենդանիների վզերին կան ցցված նետասլաքներ։ 4-րդ շարքն ամենակարճն է. այստեղ պատկերված են 4 վազող ցուլեր, որոնք դյուխները հետ շրջած նայում են իրենց հետապնդող որսորդներին։ Դոտու աջ հատվածում, առանձին շրջանակի մեջ պատկերված են միմյանց վրա կանգնած 5 առյուծներ։

Այս խմբի մյուս դոտիները ներկայացված են ավելի փոքր բեկորներով։ Այսպես, 3-րդ դոտին ունի ընդամենը 16 սմ երկարություն[8]։ Վերին և ստորին հատվածներում պատկերները թատակուսի շրջանակի մեջ են վերցված և իրենցից ներկայացնում են երկար դղեսաներով հեծյալների, որոնք կրում են սրածայր սաղավարտներ, ձախ ձեռքերում փոքրիկ կլոր վահաններ, աջերում՝ կարճ նիզակներ։ Պարդ ընդգծված են դեմքի մանրամասները։ Դոտու կենտրոնում ամրացված է բրոնզե թիթեղից կտրված, թևերը փռած դիշատիչ թռչուն, որը կտուցով պահում է դոտու ծայրում ամրացված ճարմանդի օղակը։ Թռչնի մեջքը և թևերը զարդարված են եղևնանախշով։

4-րդ դոտու բեկորը ներկայացված է նրա աջ հատվածով, որի պահպանված երկարությունը 5,7 սմ[9] է։ Այստեղ պահպանվել են հատուկ շրջանակում իրար վրա արված չորս հեծյալների պատկերները։ Ընդգծված բաշերով ձիերը սլանում են յորդա վազքով։ 5-րդ դոտու բեկորն ունի 15,7 սմ երկարություն[10]։ Դոտու մակերևույթը զարդարված է որսի տեսարանով։ Պատկերները տեղադրված են 6 հորիզոնական շարքերով։ Ծայր ձախ հատվածում մեկը մյուսի վրա պատկերված են առյուծներ, որոնք, ետ շրջված, հարձակվում են իրենց ետևից վազող վեց ցուլերի վրա։ Ցուլերից հետո պատկերված են

7 Նույն տեղում, նկ. 7։

8 Նույն տեղում, նկ. 8։

9 Նույն տեղում, նկ. 9։

10 Նույն տեղում, նկ. 15։

վեց առյուծներ և նրանց հետապնդող նույն քանակի մարտակառքեր։ Առյուծներից մեկը փախչում է, իսկ մյուսները շրջվել և հարձակվում են մարտակառքերի վրա։ Այստեղ խնամքով են պատկերված մարտակառքերը և նրանց թափքում կանգնած մարտիկները։ Ձիերը պատկերված են սրընթաց վազքի պահին։ Նրանք կրում են շքեղ սարքեր, իսկ գլուխները զարդարված են հովհարաձև ելուստներով։

Վեցերորդ գոտու բեկորը ունի 10 սմ երկարություն[11] և ներկայացնում է գոտու աջ հատվածը։ Այստեղ իրար զուգահեռ գծված են երկու շրջանակներ։ Ներքին կողմի շրջանակում պատկերված են մեկը մյուսի վրա կանգնած երեք առյուծներ, իսկ արտաքինում՝ արմավենու տերևներ։ Այս խմբի զոհերի մնացած բեկորները նույնպես մեծ չեն և ունեն 5—9 սմ երկարություն[12]։ Սրանց վրա ևս պատկերված են ցուլերին, ցատկող առյուծներին (որոնց վրա նկատվում են ցցված նետեր) հետապնդող մարտակառքեր։ Մեկ բեկորի վրա պահպանվել է թևավոր հեծյալի պատկերը, որի հագուստը և ձիու լծասարքը ներկայացված են ամենայն մանրամասնությամբ։

Ադանայի թանգարանի գոտիների մյուս խումբը կազմում են պաշտամունքային տեսարաններով գոտիները, որոնք ներկայացված են հինգ օրինակով։ Դրանցից մեկը 75,6 սմ երկարությամբ խոշոր գոտի է[13]։ Նրա եզրերը զարդարված են կիսակլոր և ձվաձև գծերով, իսկ ամբողջ մակերեսը նույնպիսի գծերով բաժանված է 11 հատվածների։ Առաջին և 11-րդ հատվածներում պատկերված են թևավոր ցուլեր։ 2-րդ, 6-րդ, 7-րդ, 10-րդ հատվածներում՝ ձկան պոչով թռչուններ։ 3-րդ հատվածի պատկերը չի պահպանվել, 4 և 8-րդում պատկերված են խոշոր զիգզագներ, իսկ 5 և 9-րդում՝ խոշոր սվաստիկաներ։

Այս խմբի մյուս 4 գոտիները ներկայացված են 2,8-ից 12 սմ երկարությամբ[14] փոքր բեկորներով։ Այստեղ պատկերված են թևավոր գրիֆոններ, որոնք ունեն մարդու, ցուլի և գիշատիչ թռչունի մանրամասներ և ձկան պոչեր։ Կան նաև այլ գիշատիչների պատկերներ, որոնք ներկայացված են թռչունի և կանացի գլուխներով, առյուծի թաթերով և ձկան պոչերով։ Հանդիպում են նաև պալատական որսի տեսարաններ, այստեղ կան կարիճի պոչերով թևավոր առյուծներ, առյուծի թաթերով, կարիճի ու ձկան պոչերով թռչուններ, ցուլի գլխով, մարդու ոտքերով, կարիճի ու ձկան պոչերով թևավոր լուկներ։ Պատկերված են նաև նետաձիգ որսորդներ, որոնք ունեն թռչնի գլուխներ և կրում են կարճ զգեստներ և երկար թիկնոցներ։

Ադանայի թանգարանի գոտիների վերջին խումբը բաղկացած է խառը տեսարան ունեցող նմուշներով և ներկայացված է 10 օրինակով։ Դրանցից առաջինն ունի 76 սմ երկարություն[15]։ Պահպանված մասի վրա կան 6 հատվածներ, որոնք մեկը մյուսից բաժանվում են շեղանկյուններով, շրջանակներով և հյուսածո նախշով։

Առաջին ձախ հատվածը պատված է արմավենաղարդով, իսկ 2-րդը կրում է խոշոր եղջյուրով ձիու պատկեր։ Ավելի հարուստ է զարդարված 3-րդ հատվածը։ Նրա ձախ մասում պատկերված են վազող ցուլ և այծ, իսկ աջում՝ ցուլ և այծ, որոնց հետապնդում է առյուծը։ 4-րդ և 6-րդ հատվածներում տեղադրված են սրածայր սաղավարտները գլխներին մեկական հեծյալներ։ Ամենահետաքրքիր տեսարանը պատկերված է 5-րդ հատվածում։ Այստեղ արմավենազարդից, շեղանկյուններից և շրջանակներից կազմված վարդյակի մեջ պատկերված է ծիսական կոմպոզիցիոն տեսարան։ Ձախ մասում զահին նստած, երկար բաճկոնով և կլոր գլխակով մարդու պատկերն է։

---

11 Նույն տեղում, նկ. 11։

12 Նույն տեղում, նկ. 7, 13, 16։

13 Նույն տեղում, նկ. 6։

14 Նույն տեղում, նկ. 10, 12, 17, 27։

15 Նույն տեղում, նկ. 4։

Դահն առանց ոտքերի է և կարծես սավառնում է օդում։ Նրա հկված մեջքը վերնամասում կորանալով ծածկում է նստածի գլուխը, որի ոտքերի առջև վեց թևանի ասող է նկարված։ Դահի առջև նկարված է հկված ոտքերով սեղան, որի վրա դրված է կիսալուսնաձև անոթ։ Սեղանի մյուս կողմում պատկերված 2-րդ մարդը սեղանից շատ բարձր է կանգնած և կարծես սավառնում է օդում։ Այս հատվածի կենտրոնում և աջ մասում մեկ այլ տեսարան է պատկերված։ Այստեղ կեռ խաչաձևվող սեղանի ոտքերը ավարտվում են ցլի կճղակներով և մարդու ոտքերով։ Սեղանի վրա մեկ շարքով դրված են մեկ կանթանի 3 սափորներ։ Քիչ հեռու պատկերված է երկրորդ կլոր, կեռ ոտքերով սեղան։ Սեղանի վրա դրված է մի խոշոր անոթ, իսկ նրա վրա նման ձևի ավելի փոքր անոթ։ Հատվածի ծայր ձախ մասում պատկերված է կարճ բաճկոնով և սրածայր սաղավարտով մի այլ մարդ։ Նա նստած է ծալվող ոտքերով աթոռի վրա։ Նրա առաջ պարզած աջ ձեռքում կա փոքրիկ թաս, իսկ ձախ ձեռքով սղջունում է սեղանի եռեում կանգնած մի խոնարհված մարդու։

Դոտու ծայրում, գիդդադաձև գծերից կազմված շրջանակի մեջ պատկերված են իրար վրա կանգնած երեք առյուծներ։

Եղակի է այս խմբի երկրորդ գոտու բեկորը[16]։ Նրա պահպանված մասի զարդերը բաղկացած են վեց կոմպոզիցիոն հատվածներից։ Ծայր ձախ և աջ հատվածները զարդարված են ամրոցների պատկերներով, որոնց աստամնավոր պարիսպները ամրացված են 6 հզոր աշտարակներով և ունեն զույգ դռներից կազմված դարպաս։ Գոտու 2-րդ և 5-րդ հատվածները զարդարված են իրար դեմ կանգնած զույգ թռչունների պատկերներով, որոնք գլխից և պոչից կտրահարելով քաշում են օձերին ամեն մեկը իր կողմը։ 3-րդ և 4-րդ հատվածներում պատկերված են կենաց ծառեր։

Ոչ պակաս հետաքրքիր է այս խմբի 3-րդ գոտին[17]։ Նրա արտաքին մակերևույթը զարդարված է 7 հորիզոնական տեսարաններով, որոնցից յուրաքանչյուրը կազմված է երեք ուղղահայաց հատվածներից։ 1, 3, 5, 7-րդ հատվածների ստորին մասի վերջում պատկերված են կենաց ծառեր։ Ստորին շարքերի ծառերի վրա՝ մեջք մեջքի տված, մեկ ոտքը ծնկած սրածայր սաղավարտներով ազնվորեն ձգած նետաձիգներն են, որոնց ուսերից կախված են կապարճներ։ Սակայն նետաձիգները ունեն լական տարբերություններ։ Այսպես՝ 1-ին և 5-րդ հատվածի նետաձիգները ունեն մարդկային դեմք, մինչդեռ 5-րդում նրանք ունեն ձիու, իսկ 7-րդում՝ առյուծի գլուխներ։ Այս հատվածների 2-րդ ուղղահայաց շարքի ծնկած բոլոր նետաձիգները պատկերված են մարդկային դեմքերով։ Գոտու 2-րդ, 4-րդ և 6-րդ հատվածներում իրար վրա պատկերված են երեքական առյուծներ, այն տարբերությամբ, որ 4-րդ հատվածի առյուծն ունի այծի գլուխ, իսկ 6-րդինը՝ ձկան պոչ։ Նման մոտիվներ ունեն նաև երկու այլ գոտիների ոչ մեծ բեկորները[18]։ Այստեղ պատկերված են երկու առատվածներ՝ որոնք կանգնած են սրածայր եղջյուրներով և թռչունի պոչերով առյուծների վրա (նկ. 1)։ Առատվածներից մեկը ձեռքին պահում է նռան ծառի ճյուղ, իսկ երկրորդը ձեռքերը առաջ է մեկնել ողջունելու կամ օրհնելու նպատակով։ Կան նաև այլ էակների պատկերներ՝ կանացի գլուխներով և տարերով, կարիճի պոչերով թռչուններ, սովորական և եղջյուրավոր առյուծներ, ձկան պոչով թևավոր նետաձիգներ և այլն։ Այս խմբի 6 և 7-րդ գոտիները նույնպես բեկորային են[19]։ Նրանք բաժանված են տարբեր հորիզոնական և ուղղահայաց հատվածների, որ տեղադրված են ձկան և սովորական պոչերով առյուծների, ձկան պոչերով ձիերի և ցուլերի պատկերներ, որոնք մեկը մյուսից բաժանվում են վարդյակներով (նկ. 2)։

---

16 Նույն տեղում, նկ. 5։

17 Նույն տեղում, նկ. 18։

18 Նույն տեղում, նկ. 20, 21.

19 Նույն տեղում, նկ. 22, 23։

Հետաքրքիր են նաև վերջին երեք գոտիները, որոնցից մեկը գտնվել է Վանից[20]։ Սրանք նույնպես զարդարված են տարբեր պատկերներով։ Հատկապես հետաքրքիր են կենաց ծառի վրա մեջք մեջքի տված այծերի պատկերները, որոնց գլխավերևներում տեղադրված է արևի սկավառակը։ Բեկորներից մեկի վրա պահպանված դրվագում դեպի կենաց ծառն են սլանում մարտակառքեր։ Մեկ ուրիշի վրա պատկերված է ցուլերի մեջքին կանգնած Թելշեբան (նկ. 3)։



Նկ. 1

Ադանայի թանգարանի ուրարտական գոտիները աշխարհի ամենահարուստ ժողովածուներից մեկն են կազմում, ղիչելով միայն Տոկիոյի Հին Արևելքի արվեստի թանգարանի նյութերին։ Հին ղրահի բաղկացուցիչ մասը կազմող այս գոտիները իրենց զարդամոտիվների շնորհիվ հանդիսանում են ուրարտական կերպարվեստի սքանչելի նյութեր։ Հիշյալ ժողովածուի ուսումնասիրության խնդիրը դժվարանում է նրանց ստույգ թվագրման հնարավորության բացակայության պատճառով (քանի որ նշված նյութերի հիմնական մասը գտնվել է պատահականորեն և զուրկ է ուղեկցող զույգից)։

Օ. Ա. Տաշյուրեկը, որը հրատարակել է այս գոտիները, և գրքի խմբագիր Ե. Ակուրգալը ժողովածուի ղգալի մասը թվագրում են մ. թ. ա. 600 թվականով[21]։ Նման թվագրության համար նրանք հիմք են ընդունել Ե. Ակուրգալի այն դիտարկումը, որ գոտիների վրա պատկերված առյուծների կղակները և վերին ծնոտները ուռուցիկ են։ Պատկերագրական այս հնարքը նրանք անվանում են «խորանարդային ոճ»[22], որը նրանց կարծիքով նկատվում է նաև Ռուսա III-ի (մ. թ. ա. 605—590 թթ.) վահանների վրա։ Դրա հետ միաժամանակ, որոշ գոտիներ, որոնց պատկերները համընկնում են Կարմիր բլուրից գտնված Արգիշտի I-ի և Սարդուրի II-ի սաղավարտների վրա եղած պատկերների հետ, նրանք թվագրվում են մ. թ. ա. VIII դարի կեսերով։

Ե. Ա. Ակուրգալի այդ դիտողություններ դեռ իր ժամանակ դիպուկ պատասխան է տվել Բ. Բ. Պիոտրովսկին՝ «Ուրարտական նվիրատվական վահանների դարդարման սիստեմը շատ կայուն էր։ Համենայն դեպս այն 150

20 Նույն տեղում, նկ. 14, 19, 24։

21 Նույն տեղում, էջ 2։

22 Նույն տեղում, էջ 12, 14։

տարվա ընթացքում, որը Արգիշտի I-ի Կարմիր բլուրից գտնված վահան բաժանում է Ռուսա III-ի Թոփրակ կալեից գտնված վահանից. զարդանախշման եղանակը չի փոխվել, անգամ կենդանիների հատումը կատարվել է նույն եղանակով։ Ճիշտ է, Ե. Ակուրգալը Արգիշտի I-ի և Ռուսա III-ի վահանների գեղարվեստական ոճի տարբերություն է գտնում, սակայն դրանք կարող են բացատրվել վարպետների անհատական որակավորմամբ[23]։



Նկ. 2

Նշված զոտիների թվագրության համար կարևոր նշանակություն ունեն ինչպես նրանց ոճական առանձնահատկությունները, այնպես էլ այլ վայրերից գտնված նույնատիպ զարդամոտիվներով զոտիների հետ զուգադրությունը։ Անհրաժեշտ է նշել, որ ուրարտական զոտիները իրրև զրահի մաս հանդես են եկել ուրարտական պետության կազմավորումից շատ ավելի վաղ։



Նկ. 3

Դրա մասին են վկայում Սալմանասար III-ի մ. թ. ա. 858 թ. արշավանքի պատկերները՝ գտնված Բալավատյան դարպասների վրա, որտեղ ուրարտա-

[23] Б. В. Пиотровский. Искусство Урарту. Л., 1962, с. 69—70.

կան թագավոր Արամեի զինվորները պատկերված են մինչև ծնկները հասնող կարճ թևերով բաճկոններով, որոնք ձգված են լայն գոտիներով։ Նրանք գլխներին կրում են կատարավոր սաղավարտներ, իսկ ձեռքերին փոքրիկ կլոր վահաններ և կարճ նիզակներ։ Այս սպառազինությունը նման է խեթական դորքի մ. թ. ա. XVI—XIV դդ. սպառազինությանը, որը հետագա դարերում այդ տարածքների համար բնորոշ չէ։

Ինչ վերաբերում է ուրարտական սքանչելի պատկերներով բրոնզե գոտիներին, ապա նրանք ըստ երևույթին հանդես են գալիս մ. թ. ա. XIX դարից, բայց նրանց ծաղկումը տեղի է ունեցել մ. թ. ա. VIII դարում Արդիշտի I-ի և Սարդուրի II-ի օրոք և ավանդաբար շարունակվել է մինչև Ուրարտուի անկումը։ Այսպես, զգալի թվով ուրարտական գոտիներ, մասնավորապես պատկերագրական առանձնահատկություններով, մարտակառքերի, հեծյալների, լծասարքի մանրամասնություններով և սպառազինության տիպերով հար և նման են մ. թ. ա. VIII դարի առաջին կեսի Արդիշտի I-ի և Սարդուրի II-ի սաղավարտների վրա եղած պատկերներին։ Սակայն այս տիպի գոտիների թվագրության համար ավելի համոզիչ փաստարկ է այն, որ նման պատկերներով գոտիներ հայտնաբերվել են մ. թ. ա. VIII դարի հուշարձաններից։ Այսպես, ռազմաորսորդական և պաշտամունքային սյուժեներով գոտիներ հայտնաբերվել են Նոր Արեշում[24]։ Նույն դարով թվագրվող ռազմաորսորդական սյուժեներով գոտիներ հայտնաբերվել են Երևանի Թիայնական դամբարանում, որոնք իրենց մոտիվներով զուգադրելի են ինչպես Նոր Արեշի, այնպես էլ Ադանայի թանգարանի և Արևմտյան Հայաստանի այլ վայրերից գտնված գոտիների պատկերների հետ[25]։

Ինչ վերաբերում է բջիջաձև գոտիներին, ապա նրանց վաղ թվագրման օգտին է վկայում այն հանգամանքը, որ նման գոտիները նախատիպ են հանդիսացել մ. թ. ա. VII դարի սկզբով թվագրվող Զիվիեի հայտնի գանձի՝ «խառը ոճի» պատկերներով ոսկե գոտու համար։ Այս հանգամանքը հաշվի առնելով պետք է ենթադրել, որ Ուրարտուում բջիջաձև գոտիները հանդես են եկել մ. թ. ա. VIII դարից ոչ ուշ։

Ադանայի թանգարանի քննարկվող գոտիների պարույրներով դարդարված I-ին խումբն իր նախշերով համեմատություններ է դանում ոչ միայն ուրարտական գոտիների մեջ։ Այդ նախշերը քաջ հայտնի են նաև մ. թ. ա. VIII—VII դդ. տեղական գոտիների վրա։ Նման գոտիների փայլուն օրինակներ են գտնվել Խրտանոցից[26], Մուխանից[27], Նոր Բայազետից[28] և մի շարք այլ վայրերից։ Քննարկվող գոտուն հատկապես մոտիկ է Նոր Բայազետինը, որը, ինչպես և Ադանայի գոտին, տարբերվում է մյուս բոլոր նման հայտնի օրինակներից նրանով, որ պարույրները միանում են իրար ուղղահայաց և

---

24 А. Л. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 242—251.

25 С. А. Есаян, Л. П. Бнагов, С. Г. Амаякян, А. Г. Канецян. Бнаншийская гробница в Ереване. Ереван, 1991, с. 15—17.

26 С. А. Есаян, Г. А. Оганесян. Каталог археологических предметов Дилижанского краеведческого музея. Ереван, 1969, с. 16.

27 В. Аветян, Л. Бнагов. Новые находки бронзовых поясов в Армении.— Вестник общ. наук АН Арм. ССР, 1977, № 12, с. 83.

28 Պահվում է Վրաստանի պետական թանգարանում, № 50—06/20—1—3։

հորիզոնական գծերով։ Ադանայից և Նոր Բայազետից նման բեկորով գոտիների հայանաբերումը վկայում է, որ այս գոտիները ուրարտական ծագում ունեն։

Ոչ պակաս հետաքրքիր խումբ են կազմում վերը նշված բջիջաձև գոտիները, որոնք հայտնի են Անի-Պեմզայից ու Զաքիմից[29], Ղուշչիից[30] և այլ վայրերից։ Զանգրազատնալով նման գոտիների ոճական առանձնահատկություններին, որոնք նման են մնացածներին, նշենք միայն, որ բջիջների մեջ դեսեղված կենդանիներն ու մարդիկ պատկերված են ստատիկ վիճակում և դուրկ են շարժումից և էքսպրեսիայից, որը բնորոշ է այլ խմբի գոտիների պատկերների համար։

Հատկապես գեղեցիկ և արտահայտիչ են ռազմաորսորդական տեսարաններով զարդարված գոտիները։ Այս խմբի գոտիները լայնորեն տարածված են եղել ուրարտական արվեստում։ Բացի Էրեբունիի և Երևանյան դամբարաններից գտնված վերոհիշյալ գոտիներից, նման գոտիներ հայտնի են Բջնիից[31], Մեծամորից[32], Ներքին Խնձորից (Կայալիդերեից)[33], Տլիից (Հարավային Օսեթիա)[34] և Արևմտյան Հայաստանից, որոնք պահվում են Տոկիոյի և Ս յունիենի թանգարաններում։

Ադանայի թանգարանի և այլ հուշարձաններից գտնված ռազմաորսորդական սյուժեներով գոտիները հիմնականում պատկերում են հինարևելյան արվեստում լայնորեն տարածված արքայական որսի տեսարանները։ Որսին մասնակցում են միայն հեծյալները և կառամարտիկները։ Այս գոտիների վրա բոլոր ֆիգուրները պատկերված են սրընթաց շարժման պահին։ Հեծյալները և կառամարտիկները քառատրոփ սլանալով խիստ պահպանում են շարքերը։ Զարմանալի վարպետությամբ են պատկերված վայրի կենդանիները, հատկապես տոյուծների և վայրի ցուլերի շարժման դինամիկան։ Այդ կենդանիների մի մասը նետահարված և վիրավորված փախչում է հետապնդող որսորդներից, մյուսները, հիմնականում առյուծները, փորձում են հարձակվել հեծյալների և կառամարտիկների վրա, որոնք, որպես կանոն, նետահարում են նրանց բաց երախները։

Այս խմբի գոտիները հսկայական նյութ են տալիս ուրարտական բանակի կազմի և կառուցվածքի մասին, նրանց զենքի և սպառազինության վերաբերյալ։ Եղակի դյուտ է այս խմբի, ամրոցի պատկերով 3-րդ գոտին։ Ամբաշինական կառույցի այդ բացառիկ պատկերը հնարավորություն է տալիս վերականգնել ուրարտական ամրոցի արտաքին տեսքը, որը, իբրև կանոն, պահպանվել է փլատակների տեսքով։ Մինչ այս դյուտը, հայտնի էին միայն

---

29 Б. Б. Пиотровский. Ванское царство. М., 1959, с. 249.

30 Б. А. Куфтин. Урартский колумбарий у подошвы Арарата и Куро-араксский эпеолит.—Вестник гос. музея Грузии. XIII В., Тбилиси, 1944, с. 36.

31 Б. Аветян, Л. Бнагов. Указ. соч., с. 87.

32 Է. Վ. Խանզադյան, Գ. Հ. Մկրտչյան, Է. Ս. Պարսամյան. Մեծամոր։ Երևան, 1973, էջ 87։

33 C. A. Barney. A first season of excavations at the Urartian citadels of Kayaledire.—Anatolian studies, vol. 16, Ankara, 1966.

34 Б. В. Техов. Об одном погребальном комплексе в Тли (Юго-Осетия).—Советская археология, 1961, № 4, рис. 5.

առանձին աշտարակների ոսկրե մանրակերտեր և ուրարտական ամրոցների ասորական պատկերներ։

Ադանայի գոտիների վրա պատկերված մարտակառքերը ոչնչով չեն տարբերվում Էրեբունիի և Երևանյան դամբարանների գոտիների, Կարմիր բլուրից գտնված սաղավարտների և կապարճների վրա պատկերվածներից։ Նրանք ունեն թևթևացրած թափք, ճկված և ուղիղ քաշան և 7—8 ճաղանի անիվներ։ Մարտակառքերին լծված ձիերը կառավարվում են փոկերի օգնությամբ, իսկ գլուխները զարդարված են հովհարաձև ելուստներով։ Հեծյալները և կառամարտիկները պատկերված են երկար բաճկոններով, զինված են նետ ու աղեղներով, կլոր վահաններով, իսկ գլուխներին կրում են սրածայր սաղավարտներ։

Ոչ պակաս հետաքրքիր են պաշտամունքային տեսարաններով գոտիները։ Նման գոտիներ հայտնի են Կարմիր բլուրից[35], Մալիշկայից[36], Գյումրիից[37], Տլից[38] և այլ վայրերից։ Այս բոլոր գոտիների վրա երևում են թևավոր առյուծներ, գրիֆոններ, կենդանիների և թռչունների ատրիբուտ ունեցող մարդիկ և այլ երևակայական էակներ։ Հատկապես խորհրդանշական է, որ դրանցից շատերը կրում են ձկան կամ կարիճի պոչ, ինչը նրանց կապում է որոշակի պատկերացումների հետ։ Այս տեսակետից հատկապես հետաքրքիր են Կարմիր բլուրից գտնված գոտիները, որոնց վրայի պատկերներում հանդիպում են առյուծների վրա կանգնած մարդիկ, ի դեմս որոնց Բ. Բ. Պիոտրովսկին տեսնում է Խալդի աստծուն, ցուլի վրա կանգնած մարդիկ՝ որոնք խորհրդանշում են Թեյշեբա աստծուն[39]։ Նման պատկերներ հանդիպում են ոչ միայն բրոնզե գոտիների վրա։ Դրանք լայն տարածված են նաև ուրարտական քանդակագործության մեջ։ Նշվածի լավագույն վկայություններն են Թոփրակ կալեից գտնված գահերը զարդարող արձանները։ Նրանք պատկերված են տարբեր թռչունների (գլուխ, թևեր), ցուլերի (մարմին), առյուծների (գլուխ, մարմին, թևեր) և մարդու (գլուխ, դեմք, իրան) մարմնի տարբեր մասերի զուգակցումով։ «Այս արձանները,—գրում է Պիոտրովսկին—վերաբերում են պալատական արվեստին և ձգտում էին հաղորդել ուժեղացած տպավորություն հարստության, շքեղության և հզորության մասին, իսկ էքսպրեսիվ սարսափելի քանդակները ծառայում էին նրա համար, որ գահի առջև կանգնածների մոտ առաջացնեն սնոտիապաշտ վախ և միաժամանակ պահպանեն գահի վրա նստած արքային չար աչքից»[40]։

Մենք կանգ չենք առնում խառը սյուժեներով գոտիների առանձնահատկությունների վրա, քանի որ այստեղ կրկնվում են հիմնականում մյուս խմբերի պատկերները։ Կանգ կառնենք միայն այս գոտիների ոճական առանձնահատկությունների վրա։ Այս խմբի բոլոր գոտիները (չնայած որոշ ոճա-

---

35 Б. Б. Пиотровский. Искусство Урарту, с. 73.

36 С. А. Есаян. Об урартских поясах, найденных на территории Сов. Армении.—Средняя Азия, Кавказ и зарубежный Восток в древности. М., 1983, с. 34.

37 Т. С. Хачатрян. Древняя культура Ширака. Ереван, 1975, с. 19.

38 Б. В. Техов. Раскопки тбилисского могильника.—В кн.: Археологические открытия М., 1969, с. 394.

39 Б. Б. Пиотровский. Искусство Урарту, с. 73.

40 Նույն տեղում։

կան տարբերություններ) պաշտամունքային նշանակություն են ունեցել, քանի որ «գոտեպատումը», ինքն իրեն շոշանակի մեջ առնելը շար ուժերից պաշտպանելու մոգական հնարք է եղել, որը և լավ արտացոլված է մինչև օրս պահպանված ազգագրական օրինակներով[41]։ Ինչպես նշվեց, բոլոր գոտիների պատկերները (բացի երկրաչափականից և բջիջաձևերից) բաժանվում են երկու մասի. ձախ՝ ուր ֆիգուրները շարժվում են աջից ձախ և աջ՝ ուր ֆիգուրները շարժվում են հակառակ ուղղությամբ՝ ձախից աջ։ Այս պատկերները կատարված են հինարևելյան արվեստին բնորոշ ոճով՝ կողային դիրքով և միայն մարդկանց կրծքերը տրված են երեք քառորդ պայմանական թեքությամբ։ Բոլոր գոտիները եղրագծված են կետերով, գույզ գծերով, հյուսածո նախշով կամ այլ դարդերից կազմված եղրագծերով։

Կատարման տեսակետից նրա տեխնիկան պարունակում է մի շարք հնարքներ։ Պետք է նշել «տեղափոխման» եղանակը։ Այսպես, հաճախակի կարելի է նկատել, որ կենդանիների վզերին կան նրանց հետապնդող որսորդների կողմից արձակված նետասլաքներ։ Միևնույն ժամանակ նման նետեր կան նաև որսորդների հետևից եկող կենդանիների վզերին։ Այս դեպքում նետերը պետք է խոցեին կենդանիների դլուխները կամ կրծքերը դիմային կողմից, սակայն հին նկարիչը տեղափոխում է նետերը ցույց տալով, որ նետերը արձակվել են հետապնդողների կողմից։ «Տեղափոխման» վառ օրինակ է Հանդիսանում Ադանայի թանգարանի 4-րդ գոտու տեսարանը։ Այնտեղ կլոր սեղանին դրված է մի խոշոր անոթ, որի վրա պատկերված է կարծես թե «օդում կախված» 2-րդ՝ ավելի փոքր անոթը։ Իրականում 2-րդ անոթը պետք է լիներ խոշորի մեջ (չպետք է երևար)։ Սակայն նկարիչը այստեղ նույնպես տեղափոխման հնարով է ցույց տալիս, որ սեղանին երկու անոթ է դրված։

Ուրարտական գոտիների նախշերը կատարված են դաջերի միջոցով և ապա մշակված սուր հատիչներով։ Սրընթաց շարժում հաղորդելու ունակություն դաջը պատրաստողների վարպետության լավագույն ցուցանիշն է Հանդիսանում։ Նման նյութերի սքանչելի օրինակ է Հանդիսանում Արմավիրի բյուրում գտնված եղջերուի բեկորը։ Նրա վրա կան կենաց ծառի մոտ կանգնած երկու այծերի պատկեր և մի քանի այլ երկրաչափական նախշեր[42]։ Այս բոլորը կարող էր մամլիչ-դրոշմ Հանդիսանալ ոսկե փոլդայի վրա անցկացվող պատկերների համար և միաժամանակ վկայում է, որ նման դաջերը տարածված են եղել Ուրարտուում։

Ուրարտական գոտիների մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս իրերը Հանդիսանում են հինարևելյան արվեստի հոյակապ նմուշներ, որոնք հնարավորություն են տալիս նաև բացահայտելու ուրարտական արվեստի ազդեցությունը հարևան երկրների արվեստի և հատկապես նրա անմիջական ժառանգորդ հայ ժողովրդի արվեստի վրա։

---

41 Նույն տեղում։

42 Б. Н. Аракелян. О некоторых результатах археологического изучения древнего Армавира.—Историко филологический журнал, 1969, № 4, рис. 8.

УРАРТСКИЕ БРОНЗОВЫЕ ПОЯСА АДАНСКОГО МУЗЕЯ

Доктор истор. наук С. А. ЕСАЯН

Резюме

За последние десятилетия в результате грабительских раскопок на территории Восточной Турции (Западная Армения) антикварные рынки Западной Турции наводнило огромное количество изделий урартского художественного металла, часть которых без необходимой интерпретации представлена в работах каталожного типа. Среди этих материалов особый интерес вызывают бронзовые пояса Аданского музея. Статья посвящена изучению этого богатого материала. Иконографические и стилистические особенности изображений этих поясов и их сравнение с известными материалами позволяют датировать эти пояса VIII в. до н. э. Выявление отдельных композиционных сцен и мотивов декора этих поясов позволяет классифицировать их по нескольким тематическим группам. В статье особое внимание уделяется выявлению признаков древневосточного декоративно-прикладного искусства, применяемых в изображениях на поясах Аданского музея.